



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԼԵՌԱՆ ՌԱԶՄԻԿԸ

ՀԱՅ ՅԲՐԱՅԻՆԵՐՈՒՆ



ԵՐՐՈՂՅԻ
ՌԻՍԵՆՈՂԵԿԱՆ
ՄԻՈՒԹԻՆ

1904, ԺԸՆԵՎ

9(496.5)
Ե-45

05 OCT 2011

(496.5)
Ե-45
ա

ՊԵՏՐՍԲՈՒՐԻ Է ՏՊԱԿՐՈՒԹԵԱՆ

„ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ“

(L'ARMÉNIE ET LA QUESTION ARMÉNIENNE)

ՄԵՆ ԺԱՂՈՎԱՆՈՒ ՖՐԱՆՍԵՐԻՆ ԼԵՂԻՈՎ
ԲԱՂՎԱՅԱՆ ՄՕՏ 1000 ԿՐԵՄԻՑ

ՊԵՏԿԵՐԸ ԶԱՐԿ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՆՇԱՆԱԿՈՐ ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐԻ

Հրատարակութիւն

Յ. Մանուկ

ԵՒՐՈՊԱՑԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

(Ծրագիրը սուրճ և առանձին)



ԼԵՌԱՆ ՌԱԶՄԻԿԸ

(ՓՕԹՕՍ ՑԱԿԷԼԱՍ)

ԵՄԷՆԻՑԻ

Ֆրանսերէնէ թարգմանեց Ս. Մ.

Հրատարակութիւն

ԵՒՐՈՊԱՑԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ժ Ը Ն Ե Վ

1904

Սուրբի գաւառը, Էպիրոսի գրեթէ կեդրոնը, Ամպրասիի ծոցէն տասներկու և Եանեսէն տասնչորս մղոն հեռու, անմատչելի լեռնակոյտ մըն է, որուն մէջէն Ախերոն գետը (արդի Մավրօբօզամօսը) անդնդագոռ կ'անցնի: Այս վայրենի երկիրը վեթիսարի ամրոցի մը պէս չորս կողմէն նեղ ու վտանգաւոր կիրճերով գոցուած է, ուր թափանցելու համար պէտք է անցնիլ նեղբարակ շաւիղէ մը որ՝ Սիսդրուն տիրայրշատակ գետին ընթացքը բռնելով՝ մերթ ծայրագոյն բարձրութիւնով մերթ անձուկ կիրճերու գարուստերէն կ'ելլէ կ'իջնէ: Ամբողջ լեռնագաւառը դժնէ ու արհաւիրաց տեսք մը ունի. լեփապառածներու, գահաժգններու, խորտ, ամուլ և ծամածուռ լեռներու քառս մըն է, մեռելային և ամայի թախիժով մը համակուած: Հեղեղներու՝ որոնք կ'ուռչին ամենաթեթև անձրևէ մը՝ խուլ գուլտուկը միայն կը խանգարէ սս դժնդակ և լուռ ամայութիւնը: Չես կրնար գտնել մեծ բուսականութիւն մը՝ անդնդային բարձրութիւնները չափելէն և սուր-սուր ժայռերը գիտելէն յոգնած աչքերդ հանգստացնելու համար: Քանի մը դափնեփարդի թաւուաներ միայն տեղ-տեղ կը հովանաւորեն սառնորակ աղբիւրներ: Բարձր բարբէներու (ASSIS) վոյց ցանցառ շոճիներ, որոնք ամենաթեթև հովէ մը կը սարսուան ու կը սլուրլան: Հեռահեռու՝ հարաւ նայող լեռ մը հեշտ գառիվայրով մը կը դարվարի մարմանդ ալբեան մը ձևացնելով:

Այս բարձունքին վրայ 19⁰⁰ դարու սկիզբները քա-



4980
41

ջարի ժողովուրդ մը ծաղկած է: Տանջեցերորդ դարու վերջին Էպիրոսի զանազան կողմերէն եկած քանի մը մարդիկ, թիւրքերու երեսէն փախստական, այդ ազատասէր և ապահով վայրին մէջ՝ որ անմատչելի ամառայնութիւններու գիրկը կը հանգչէր, իրարու հանդիպեցան. հետզհետէ նորեկ վտարանդիներ եկան ստուարացնել քրիստոնեայ փոքրիկ գաղթականութիւնը: 1700-ին սուլթաններու թիւր արգէն 3000-ի կը հասնէր՝ որոնք անթափանց ժայռերու ետին ամրացած, տեսակ մը զինւորական դաշնակցութիւն կազմած էին, սարսափ ազդելով թիւրք իշխանութիւններուն, որոնք երկար վայրագար փորձերէ ետքը զանոնք իրենց գիրքէն խախտելու համար, ճարահատ ստիպուեցան ընդունիլ անոնց անկախութիւնը:

Ապրուստ ճարելու համար, զոր իրենց անբեր լեռները չէին մատակարարեր, սուլթանները գրաւեցին յարակից հովիտներու և դաշտերու մէկ մասը, որոնց բնակիչները մօտ 2-3000 հոգի դրացի սուլթանի (pro-rasouliales) անունը առին: Ահռան ժողովուրդը չորս գիւղի մէջ ամփոփուած էր, Քեաֆա, Ավարիքոս, Սամոնիվա և Վուլի բարձր սարահարթի մը թառած՝ ուր հասնելու համար մէջմէջ ապաստաններով և վիհերով չորս մղոն ճամբայ պէտք էր կտրել անցնիլ: Կերարանչիւր մէկ մղոն երկայնութեան վրայ կիրճին ամենավրտանգաւոր կէտին բերդաշտարակ մը (պորթոս) կար: Քեաֆա կը գտնուէր առջև մղոնին ծայրը՝ զարհուրելի հեղեղատի մը եղբրքը, ուրկէ անձրեային ջրերը Ախերոնի մէջ կը գահավիժեն: Քունդիի սուր կատարը՝ որուն վրայ սրբուհի Աէնէրանդի նուիրուած եկեղեցի մը կար, կը տիրէր այս գիւղին վրայ, որ բոլոր միւսներուն բանալին էր: Ավարիքոս և Սամոնիվա երկրորդ և երրորդ մղոնին վրայ օդին մէջ առկախ էին: Աերջապէս մեծ Վուլին կամ Գագասուլի աւելի բարձր գիրքի մը մէջ

աներեւոյթ էր: Մեծ-Սուլի մէջ կը բնակէին ազգին էն զօրաւոր ու հին ընտանիքները, գլխաւորապէս Յաւէլասները, Քօցարիանները, Գրակոսները որոնց՝ աւանդութիւնը ամենահին ծագում մը կուտար:

1792-ին (Ալի փաշա¹⁾), որուն անունը յաւէտ հռչակաւոր պիտի մնայ օսմանեան բռնակալութեան արիւնդուշատարեզրութիւններուն մէջ, Եանեաէն կ'ելէր 10,000 հոգիէ բանակով մը, իբր թէ Արժիրօկասդոնի բնակիչները երթալ պատժելու համար, որոնք մերժած էին իր տեղակալներուն մէկուն առջև իրենց դռները բանալ:

Խկապէս, ագ արշաւանքը որ երկար առեկէ ի վեր կը ծրագրուէր և կը պատրաստուէր, ուղղուած էր Վուլի լեռնականներուն դէմ, որոնք Էպիրոսի սատրափին չարաչար պարտութիւն մը կրել տուած էին: Ալի միտքը զրած էր ագ նախատինքին համար սարսափելի վնէժ առնել: Արպեսզի ուէ կասկած չունենան սուլթանները, որոնց հետ սուտ հաշտութիւն կը կեղծէր, անոնցմէ օգնութիւն ինդրեց. անոնք ալ գոռոզ ինքնավստահութիւնով մը եօթանասուն մարդ զըկեցին Լամպրոս Յաւելաթի, իրենց էն արիասիրտ պետին հրամանատարութեան տակ: Լամպրոս հետը առաւ իր տղան Փօթօսը՝ որպէսզի ագ արշաւանքի միջոցին ծանօթանայ զինուորութեան արհեստին:

1) Ալի սուլթանացի չքաւոր ընտանիքի մը զաւակ, ծնած է Թէփէլէն: Շատ կանուխէն սկսած է աւազակութեան ուրկէ բաւական դրամ շահելով, իր փոքրիկ երկրին մէջ պէտք եսան տիրող ուժը գնեց: Մարդասպանութիւններու, ոճիրներու, մասնութիւններու անլուր կապակցութիւնով մը, հետզհետէ գրաւեց Մակեդոնիան, Էպիրոսը, Թեսալիան և դրամի ուժով Բարձր Դոնէն այդ երկիրներու փաշայութիւնը ստացաւ: Այդքան իշխանութիւն ձեռք ձգելէ յետոյ՝ ուզեց անկախ ըլլալ մինչև իսկ, կըրսն, երազեց Բիզանդիոնի գահուն վրայ բազմիլ և նոր հարստութիւն մը հիմնել: Իր լայն իմացականութեան կը միացնէր անսահման խորամանկութիւն, ննդամտութիւն և զազանային վայրագութիւն մը: Շահու,

Քօթօս, հազիւ 15 տարեկան, առաջին անգամն էր որ իրենց ընտներէն դուրս կ'ելէր: Բինչև այդ ժամանակ քէլֆիներուն հետ հերոսական մարզանքներ ընել միայն սորված էր, պատերազմական պար, խաղեր, բանաստեղծութիւն և այլն: Լամպրօս և իր փոքրիկ խումբը գացին միացան փաշային, որ Թիամիս գետի ափին մեծ դաշտի մը մէջ բանակ դրած էր: Յաջորդ օրը Ալիի առաջապահի հեծելազունըը եկաւ աւետեց Արժիրօկասդրօնիներուն դէմ՝ իրենց յաղթութեան լուրը: Ալի փաշա դալիք արշաւանքներուն համար բարեգուշակ մեկնութիւն մը առլ կեղծեց այդ առաջին յաջողութեան, ուստի կանգ առաւ և ուղեց որ նոյն օրուայ ետինքը ուրախութիւն ընելով անցնեն: Երբ արևը կէս մը մարը կը մտնէր Պենտարի բարձր սարերուն ետևը և ցերեկւայ տաքութիւնը կը մեղմանար, այբանացիները հրաւիրեցին սուլիացիները, որ իրենք ալ մասնակցին իրենց խաղին, որ տեսակ մը յունական արշաւախաղ էր և որ մէկ ոստուժով ամենալայն միջոցի մը վրայէ պէտք էր ցատկել: Սուլիացիները, համբաւաւոր իրենց զարմանալի թեթևաշարժութիւնով, իսկոյն ընդունեցին:

Յաղթականներու համար մրցանակ կար: Կէ որպէսզի իրենց ազատ շարժումին մէջ վրանին ծանր բեռ չունենան՝ սուլիացիները հանուեցան իրենց զէնքերէն: Ալի

վրէժխնդրութեան, ընչարաղուծեան և յաճախ պարզ քմահաճոյքի համար հազարաւոր մարդիկ ու կանայք մոռցուց, ամբողջ ցեղ ժողովուրդներ գնդամար ըրաւ կամ թունաւորեց: Ջուրի որևէ խիղճ զգացումէ՝ աւելորդապաշտ արհաւիրքներու ննթակայ էր, դժնէ տեսիլքներ անդադար կ'ընդհատէին իր պարծ սունը: Շարունակ հոգեկան և ննարդային խռով դրութեան մէջ, օր-ցերեկով իր գոհերու մոռել-ուրուակամներով շրջապատուած կը կարծէր ինքզինքը: Ամբողջ հատոր մը անբաւական է այս մարդուն գազանութիւններու պատուութիւնը գրելու համար, որուն վիթխարի և յարստու փառասիրութիւններէն մէկն էր՝ սուլիացիները ընկճել և անոնց ցեղը քնաջինջ ընել:

փաշան իրաւարար եղաւ մրցամարտին: Խաղը սկսաւ մեծ ժխորով մը: Հէնց առջի բոպէին սուլիացիները, մանաւանդ Քօթօսը փայլեցան իրենց հրաշայի թեթևաշարժութիւնովը: Արջապէս երիտասարդ Յալէլասը՝ սքանչելի ոստիւնով մը անցաւ բոլոր միւսները և յաղթող հռչակուեցաւ: Ալի փաշան ոտքի ելաւ և ծափահարեց: Այս նշանին վրայ՝ թիւբքերը, որոնք իրենց պետին ամեն մէկ շարժումին ուշադրութիւնով կը հետևէին, միահամուռ թափեցան յոգնած ու անզէն սուլիացիներու վրայ և զանոնք բոլորն ալ շղթայի զարկին:

Ալի բոպէ մը չըկորսնցնելով անմիջապէս վազեց Սուլիի վրայ՝ զոր կ'ուզէր յանկարծակիի բերել: Բարեբախտաբար գերիներէն մէկը, որ հուժկու մէկն էր, գիշերով յաջողեցաւ իր կապանքները խզել և թշնամիէն առաջ վազէվազ հասաւ Սէլէիտ ու իր հայրենակիցներուն գուժեց վտանգը: Քանի մը ժամու մէջ սուլիացիները բոլոր պատրաստութիւնները տեսան, իսկ բարեբեր դաշտի մէջի սուլիացիները ամայաւեր ընելով իրենց սոււնտեղը ու արտերը, լեռը բարձրացան: Այնպէս որ երբ նենգամիտ փաշան դաշնակցական հողին վրայ մտաւ՝ տեսաւ որ դաշտերը անմարդաբնակ, շտեմարանները դատարկուած, ագարակները երեսի վրայ ձգուած, աղբիւրները ցամբած, հորերը հողով լեցուած և արտերը հնձուած էին: Ալի տեսնելով որ իր հակառակորդները ինքնապաշտպան զիւք բռնած են, բանակցութեան մտնել ուղեց անոնց հետ. ուստի ազատ ձգեց Լամպրօս Յալէլասը՝ պայմանով, որ երթայ իր հայրենակիցները համոզէ, որպէսզի զէնքերին վար դնեն: Սուլի մտնելուն պէս՝ Լամպրօս իր ճառերով լեռնականներուն հայրենասիրական եռանդը բորբոքեց և զանոնք պատրաստեց կորովի ինքնապաշտպանութեան, զօհելով այսպէս հանրային փրկութեան համար իր որդին և միւս գերիները՝ զոր Ալի իբր պատանդ վար դրած էր:

Փօթօս և իր ընկերները Եանեա զըկուեցան, որուն կառավարիչը Աէլի, Ալիի տղան, զանոնք բանտը նետեց մահուան սպառնալիքով: Իր առջև կանչելով Փօթօսը, զոր իբր կրտսերագոյնը անոնց մէջ, կ'ուզէր սարսափեցնել ըսաւ անոր. — Աաղը ամենքդ ալ ողջ ողջ պիտի այրուիք. — Գէշ չես ըներ, պատասխանեց յանդուգն երիտասարդը, իմ հայրս ալ նոյնը պիտի ընէ, երբ հայրդ և եղբայրներդ անոր ձեռքը իյնան: Փօթօս կը սրտապնդէր իր ընկերները, որ քաջի պէս մեռնին: Երեք օր, երեք գիշեր աննկարագրելի տագնապներ կրելէն ետքը, գերիները, որոնք մահուան կ'սպասէին, յանկարծ բանտէն հանուելով ազատ ձգուեցան իրենց լեռնավայրը երթալու համար: Ալի փաշա յաղթուելով սուլիացիներէն — որուն ողբերգական անցքերը երգուած են Էպիլոսցի բանաստեղծներէն — ստիպուեցաւ խաղաղութեան գաշինք կնքել սուլիացիներուն հետ և գերիները ետ տար, հազար անգամ զղջալով, որ առաջուց չէր սպաննած զանոնք:

Փօթօս Եանեայի մէջ իր գերութեան նենգասիրտ հեղինակին դէմ անշէջ ատելութիւն մը ունեցած էր, զոր պարագաները աւելի պիտի արծարծէին: Արդարեւ քանի մը ամիս ետքը մեռաւ իր հայրը վերջի կուռի մէջ ըստացած վէրքերէն: Երիտասարդ Յավէլասը ազատ էր այլևս իր ռնկերիմ թշնամիին դէմ անողոր կուռ մղելու:

Լամպրօս Յավէլաս հոգին աւանդելէ առաջ՝ բովը հաւաքեց ցեղին գլխաւորները, որոնց ինքը ընդհանուր զօրագլուխը (polémarche) եղած էր: Անոնց արու մնաբարտիներ ըսելէ յետոյ, վերջին ձիգով մը վերցնելով արմատողի (armatole) այրուղէն գաշուե՞ր՝ որ իր պաշտօնին նշանն էր և զոր այնքան արիութիւնով գործածած էր, յանձնեց իր որդուն: Իր զինակից ընկերները մեռնողին լուռ շարժումը հասկցան և միաբերան Փօթօսը Սուլիի պոլեմարքը հռչակեցին: Ժողովը դական երգ

մը պերճախօս կերպով կը պատմէ այդ քաջորդին մահը:

« Լամպրօս սպաննեց յիսուն պէյ, հարիւր աղա, հազար թիւրք. մեռաւ ան. իր բաւերարները շուրջը բուրուած կ'ողբան զինքը: »

« Լամպրօսին իր էն աղււոր հայուները հազցուցէք. սըուեցուցէք զանի յաւիտենական տօնախմբութեան համար. և իր գլուխը հանգչեցուցէք կանաչ դափնիներու բարձի մը վրայ: »

« Լամպրօսը որդի մը ունի, որուն կը յանձնէ իր կարաբին հրացանը և արծաթ պատէնիք դաշուե՞ր. — Զօրագլուխ եղիւր, կ'ըսէ անոր: »

« Գերեզմանիս մէջ կայնուի թաղէ զիս և աջ ականջիս կողմէն ծակ մը բաց, սրպէսղի պատերազմի ատեն իմ հրացանիս ձայնը լսեմ: »

« Ես կ'ուզեմ որ ամեն իրիկուն, կուռէ դարձիդ կամացուկ մը պատմես ինձի զնդակներուդ տակ ինկնողներուն անունները, մինչև որ Ալի անունը հրձեցնէ ականջս: »

Վէլֆթները կարիճ զօրագլուխին ամենափառաւոր թաղում մը կատարեցին: Քաջասիրտ ընկերները եկան մէկիկ մէկիկ համբուրեցին անոր գունաւ շրթունքները և ծռելով անոր ականջին, միւս աշխարհքին համար յանձնարարութիւններ ըրին: Աերջապէս Լամպրօս առաջնորդեցին գերեզման ծաղիկներով, դալարներով և զէնքերով զարդարուն դագաղի մէջ դրած: Այդ օրէն Փօթօս Յավէլաս միակ մտածում մը ունեցաւ, հօրը վրէժը լուծել և իր ատելութեանը բաւականութիւն տալ: Իսկ Ալին կը մտաբերէր իր վերջին պարտութեան համար բնաջինջ ընել ազատ լեռնավայրը, որուն պատերազմիները, նոյն իսկ փաշային խօսքերով. « իր գլխուն վերև մշտական սպառնալիքի մը պէս կը սաւառնէին: » Աւելի համբերող քան իր կրակուրոց հակառակորդը, Ալի կ'սպասէր իրեն վերապահել յարձակողականի առաւելութիւնները անվրէպ ու անակընկալ հարուածով մը:

Վերջապէս առիթը զոր կը փնտրէր Փօթօս, ներկա-
յացաւ 1800 յունիս 2-ին: Այդ օրը 15,000 հօգով Ալի
փաշա կամաց-կամաց արշաւեց գաշտի սուլիացիներուն
վրայ, որոնք յանկարծակիի գայով՝ հեիհե նետուեցան
լեռը, առանց հետերնին պաշար կարենալ առնելու որ-
պէսզի ժողովուրդը կարողանար դիմանալ պաշարման:
Լեռնականները փաշային մեկէնիմէկ ներկայութենէն
ահուգողի մատնուեցան և մինչև իսկ կը նախատեսէին
անհաւասար կռուին մէջ իրենց հաստատ մահը: Լայն
սարահարթին վրայ, ս. Կէորդ եկեղեցիին առջև խմբուած
երգում ըրին մտնալ իրենց մամուտը թշնամութիւն-
ները և իրար համբուրելով՝ վճռեցին կեանքերնին թանկ
ծախել թշնամուն: Մենակ Փօթօսն էր, որ անխռով կը
մնար վառնգի մեծութեան առջև, որովհետև ինք արդէն
չատոնց այդ օրին կ'սպասէր: Համբոց իր ուժերը, բո-
լորը 1800 հօգի և 30 զօրագլուխ էին. յետոյ վստահ
լեռնականներու յայտնի յանդգնութեան վրայ՝ որոշեց
ուղղակի թշնամուն դէմ գնալ: Այդ ըսել չմնաց՝ բոլոր
արիութիւնները, որ բոպէ մը թերահաւատած էին,
սրտոտեցան: Հայրենիքի ու աղատութեան սէրը բռն-
կեցաւ կորովի սրտերուն մէջ և չարագուշակ նախա-
զգացումները փարատեցան: Վին, մարդ, երկխայ փողօր-
պարծանք կը սեպէին բաժին ունենալ մատարուտ կռուին:

Սակայն Փօթօս խոհեմութիւն չհամարելով յարձակիլ
լեռան ստորաբ խուան բանակին վրայ, վճռեց փոքր
կռիւներով թշնամին ներսը կիրճերուն մէջ քաշել և
յետոյ ամբողջ լեռնային ուժով խորտակել զանի: Այլ-
բանացիները լեռնավայրի բերանը ոչ մէկ դիմագրութեան
չհանդիպելով խմբովին վաղեցին և ինկան անծանօթ,
նեղ, ծուռուծուռ ու վախուտ ուղիներու մէջ: Մորեռանդ

դէրվիշները անընդհատ կը գրգռէին զանոնք: Բանակը
չատ կամաց կը յառաջանար, ատենատեն կանգ կ'առ-
նէր միայն երբ ձիաւոր մը իր ձիով մեկտեղ անդունդի
մը մէջ գլորէր արկածով կամ անծանօթ գնդակէ մը:
Ալի փաշան արեծագին եկած նստած էր Վիրցաբա
բլուրին վրայ, ուրկէ Սէլէիտի լեռներուն հսկայաձև
խրոխտ ամփիթատը կը տեսնուի: Պաշային քէյֆը տեղն
էր. արշաւողները անզգալբար կը մտանային Մեծ-Սու-
լիին, որուն օգտակար և արեւայածառ աշտարակները,
որոնց վրայ դաշնակցութեան դրօշակը կը բարձրանար,
իրենց ծայրայեղ բարձրութիւնով կը նմանէին միջին-
դարու դղեակներու գիտաշտարակներուն (մուշոն) որոնց
առջև պաշարողները իրենց մահը կը գտնէին:

Ալբանացիները Ավարիբօս և Սամօնիբօս գիւղերը առ-
նելէ յետոյ, որոնք պարպուած էին, քարեցին քեաֆայի
վրայ՝ ետևնէն ձգելով երկար շարք մը եամնացողներու:
Այս անգամ գնդակներու ահաւոր կարիւտ մըն էր որ
սկսաւ ակոյալ ալբանացիներուն վրայ. Յալէլաս միաբը
հաստատ դրեր էր կեցնել զանոնք: Քեաֆայի աշտա-
րակին մէջ իր վեցհարիւր մարդով եօթը ժամ անընդ-
հատ կատաղի և արիւնահեղ կռիւ մղեց թշնամուն դէմ՝
որուն միշտ նորնոր մարդիկ կուգային աւելնալ և ուրկէ
հարիւրաւորներ կ'իյնային քլէֆթներու տեղատարափ
գնդակներէն: Վերջապէս երկուստեք յոգնասպառ եղած
էին, մանաւանդ խղզուկ տաբութիւն մըն ալ կար:
Փօթօսի զինւորները ալ չէին կրնար գործածել հրա-
ցաննին, որ տաք կրակ կտրած էին: Հրացանաձգու-
թիւնը երկու կողմէն լուց: Այդ պահուն սուլիացի կա-
նայք, որոնք լեռան բարձր գագաթներուն վրայ հաւաք-
ւած, սրատորոի անձկութիւնով կը հետևէին կռուի բոլոր
շարժումներուն ու աղմուկներուն, ստսկում մը զգացին,
երբ տեսան որ յանկարճ լուցին հրացանները և միմիայն
դէրվիշներու իրիկուան աղօթքի ձայները կը լուռէին:

խորհրդանշան թէ սուլիացիները յաղթուած էին: Մօջօ, Փօթօսի մայրը, կացինի մէկ հարւածով անմիջապէս կը կտորէ փամփուշտներու սնտուկ մը, կը լեցնէ անկէ իր բըրդէ գոգնոցը, մնացածն ալ բաժնելով իր ընկերուհիներուն, երեք հարիւր հերոսուհիներով կը խոյանայ քեաֆայի կողմը, աղբին վրէժը լուծելու կամ մեռնելու համար ¹⁾: Անվեհեր կիները յանկարծակիի բերելով թիւրքերը, ամեհիօրէն յարձակեցան անոնց վրայ, մինչդեռ աշտարակի մէջիները սկսան սոսկալիօրէն կրակ տեղալ:

Մօջօն, որ էն առաջին տեղը կը կուռէր, յանկարծ կը կենայ աղէկաուր տեսարանի մը առջև: Ինը սուլիացիներ հօգեւարք գետին փռուած էին. անոնց մէջ կը ճանչնայ իր քեռորդիներէն մէկը, կը նետուի անոր վրայ, կը համբուրէ անոր շրթունքները, որ վերջին շունչը կը փչէր, և թաշկինակը փաթթելով անոր արիւնջուայ գըլուխը՝ կ'արտասանէ սա լրակնիկ ու պատերազմաշունչ խօսքերը. «Միտուն քեռորդիս, քու արև օրդ աղատելու համար ուշ հասայ, բայց մեռնելուդ վրէժը պիտի առնեմ՝ քու սպանիչներէդ»:

Այս բոպէին Փօթօսը ահազանգը կը հնչեցնէ: Յունաց աւանդութիւններու մէջ ուրիշ երեւելի հերոս մը, Գիմօս Գրակօս, որ մօտակայ անտառի մը մէջ դարանակալ կեցած էր՝ իր քանի մը հարիւր մարդիկներով արծիւի պէս կը հասնի: Թիւրքերը երբ կը տեսնեն, որ ամեն դիէ պաշարւած են՝ լեղապատառ կը փախչին լեռնէն վար, անդունդներու մէջ գլորվոր, կորսնցնելով 3000 մարդ և ահագին քանակութիւնով զէնք ու

1) Բանաստեղծները այսպէս երգած են Մօջօի անվեհերութիւնը. «Հոս համբաւաւոր Սուլին է, որ կիները, աղջիկները, տղաքները կը պատերազմին, ուր Մօջօն կը կոռուի, մէկ ծեղրով երնխան բռնած՝ միւսով հրացանը, զոգնոցն ալ լիքը փամփուշտով:

«Հոս ահաւոր Սուլին է, աշխարհաշահ Սուլին, որ Յավէլա-սուհին պալիքարի մը պէս կը պատերազմի էն առջեւը ինկած»:

ուղղամթերք: Սուլիացիները 70 կորուստ և 100-ի չափ վիրաւոր միայն ունեցան:

Ալի փաշան, որ յաղթութեան կ'սպասէր, երբ լսեց իր բանակին աղէտը, սարսափահար ձի նստաւ և սրբարշաւ փախաւ Կանեա, այնպէս որ տասը մղոն ճամբայ կարելու համար երկու ձի ճամեցուց:

Քանի մը ամիս ետքը, Ալի փաշան նոր արշաւանքով մը կը մտադրէր փայլուն վրէժ մը առնել սուլիացիներէն՝ որոնք այլևս արթուն կը կենային:

Ալի իր զօրքերը քիչ քիչ մօտեցուց լեռան և պատրաստեց զանոնք մեծ յարձակումի մը: Ալբանացի պետերուն մէջ, Խալամ Պրոնիօ մէկը կար, որ անկախութիւնը կորսնցնելուն՝ սրտանց չէր ծառայեր Էպիրոսի զարհուրելի փաշային ու երանի կուտար Ալէէիտի ազատ յոյներուն, որոնց աննման քաջութիւնը անոր մէջ մեծ հիացում և համակրութիւն շարժած էին: Պրոնիօ՝ անմիջապէս իր հաւատարիմ ծառաներէն մէկը Յավէլասին զըկեց իմացնելու անոր Ալի փաշայի յարձակողական դիտաւորութիւնը և խորհուրդ կուտար միանգամայն որ գիշերային ռեէ անակնկալով մը այդ յարձակումի ծրագիրը դերև հանեն, որ կրնար աղիտարեր ըլլալ Սուլիի պաշտպաններուն: Այս լուրին վրայ Փօթօս իսկոյն ընտրեց չորս հարիւր չաբբաշ և ճարպիկ բալիքարներ ու վերջալուսին լեռնէն վար իջնալով, խիստ նախազգուշութիւնով մօտեցաւ թիւրքերուն, որոնք իրենց սովորութեան համեմատ խորունկ խորունկ կը քնանային: Խաւար, ծանր և մրրկոտ գիշեր մըն էր, յաճախակի որոտ կայծակներ՝ մեծ փոթորիկ կը գուժէին: Սուլիացիները յանկարծ հրացանաձգութիւնները սկսան. թիւրքերը քներնէն զարթնած՝ վաղցին հրացաններն առնելու և մութին մէջ աջուձախ սկսան պարպել առանց յարձակոյնները կարենալ տեսնելու. այդ բոպէին փոթորկալից և սոսկալի կարկուտ ալ տեղայով՝ թիւրքերը իրենց

համար երկնային պատիժ համարեցին և երեք ժամ ապարդիւն կռիւէ յետոյ փախան տարմատար եղան, սուլիացիներուն ձեռքը ձգելով երկու հարիւր մեռած, բազմաթիւ վիրաւոր և մեծաքանակ պաշար, զէնք և ուղղամովերք: Սուլիացիներու կողմէն ինկան միայն երեք հոգի: Քաջարի լեռնականները վերադարձան իրենց արծւի բոյնը, թանկագին աւարով շալկւորած, այն է վառօդու հաց:

Ալի փաշայի բանակին մարդիկը յուսահատ սկսան դասալիք ըլլալ և տուներնին ցրուել: Ալի՝ վախնալով որ զինուոր չի մնար քովը, փոխեց ծրագիրը և յայտարարեց որ սուլիացիներուն հետ արձակ դաշտի վրայ ալ պիտի չկուտի, հապա սաստիկ նեղ պաշարումի պիտի ենթարկէ զանոնք, զրոյի հետ ամեն յարաբերութենէ զզկելու համար: Այս նոր սահմանութիւնը բաւական համոզեց դասալիքները, որոնք քիչ շատ կը վախնային արդէն փաշայի վրէժխնդրութենէն: Ալի Ալէէիտի չորս բոլորը ամրաշէն բանակատեղիներ հաստատեց: Քլէֆթները կռահելով թշնամուն դիտաւորութիւնը, բազմապատկեցին իրենց յարձակումները և ամբողջ ամիսներ հանգիստ չձգեցին թիւրքերը, որոնք հազարումէկ զբւարութիւններով և ահուգողով կը շարունակէին շինութիւնները: Քոթոս՝ իր բոլոր ջանքը և արիւթիւնը գործ դրաւ որ լեռան աղատութիւնը չկաշկանդուի. ուր որ հասնէր, քաջութեան հրաշքներ կը գործէր, այնպէս որ թիւրքերը տեսակ մը աւելորդապաշտ սարսափ կ'զգային անոր նկատմամբ: Սուլիացիները անոր անունը իրարու ձայն տալու նշան ընտրած էին:

Գժբախտաբար Ալէէիտը կորսնցուց իր հերոս պարագլուխը: Օր մը, երբ Յովէլաս պատերազմէն ելքերացած, իրեններէն շատ հեռացած էր, ալբանացի մը, որ չէր յանդգնէր երես երեսի անոր վրայ յարձակիլ, ժայռի մը ետևէն նշան առաւ և գլխէն գնդակահար ըրաւ

զանի: Յովէլաս կ'իյնար գոչելով. «Ապեցէք բարեկամներս, վազեցէք, մեռայ, կտրեցէք գլուխս. եթէ առնեն շուններուն պիտի նետեն»: Աւթսուն սուլիացի միայն պատասխանեցին իր կոչին: Անոր արիւնյողիկ դիակին վոյ մոլեգին կռիւ մը տեղի ունեցաւ և յաղթութիւնը մնաց լեռնականներուն՝ որոնք Քոթօսը առին փախցուցին: Ալէքքը թէև խորունկ բայց մահացու չէր: Չորս ամիսէն առողջացաւ. երբ պօլեմարքը առաջին անգամ անէն դուրս ելաւ, ամբողջ լեռը ուրախութենէն թնդաց, քլէֆթները չէին գիտեր ինչպէս յայտնեն իրենց ցնծութիւնը: Սակայն Քոթօս տերունակ շեշտով մը պատասխանեց իր ընկերներու զուարթ ցոյցերուն: Իր առաջին հոգն եղաւ երթալ աչքէ անցնել կիրճերուն մուտքը և ցաւով նկատեց որ թշնամին պաշարումի գործողութիւնները շատ առաջ տարած և Ալէէիտի ապագան վտանգի մէջ գրած էր: Ալի փաշա, ամրութիւններէն զատ, որոնք այնքան երկիւղալի չէին, լեռան զանազան ելուժուարներուն բերանը թնդանօթներով զինած տասերկու խոշոր աշտարակներ շինել տուած էր: Սուլին վերջապէս բանտարկուած էր փոսուպարիսպներու անանցանելի ցանցի մը մէջ: Քլէֆթներու շարունակ յարձակումները, խորամանկութիւնները, հայհոյալից գրգռումները այլևս օգուտ չունէին, թիւրքերը խոյս կուտային կռիւէ, իրենց ամրոցներէն դուրս չէին ելլէր և չարագուշակ անսրբտութիւնով մը կ'սպասէին իրենց նոր սահմանափակ անարդիւնքին:

Շուտով լեռան պաշարը հասնիլ սկսաւ: Սուլիացիները ամեն բանէ առաջ ուտելիք պէտք էին ձարել. ցերեկին չհամարձակելով թշնամու կրակի տակէն անցնիլ, գիշերները զատ զատ խմբերով լեռնէն կ'իջնէին անասուն և ցորեն փնտրելու համար: Ընդհանրապէս խաւար և փոթորկալից գիշերները կ'ընտրէին գողութեան համար: Այժմ մազէ շինուած երկար տառատկ-

ներու մէջ պլուսած, լուռ ու կամաց կը քաղէին, սողալով մացառներու մէջէն ուր՝ իրենց զգեստներու մութ գոյնին պատճառով չէին նշմարուեր: Խոհեմութիւնը մինչև հոն մղած էին, որ ժանգէն սեցած զէնքերնին իսկ չէին սրբեր որ չփայլին: Այսպիսի նախազգուշութիւններով շատ անգամ պաշարման գիծը անցնելով, սովորուկ դայլերու պէս կը լեցուէին դաշտերը, գիւղերը, կ'սպանէին քնած բնակիչները, կը թալանէին շտեմարանները և արշալուսէն առաջ պաշարի բեռներով կը վերադառնային տեղերնին: Թիւրքերը ապշած ու սահմուկած սուլիացիներու զիշերային այդ յանդուգն արշաւանքներէն՝ անոնց գիշերուան գեղեր անունը տուին:

Տասը ամիս պաշարումէ յետոյ, իրերը իրենց նախկին դրութեան մէջ կը մնային սակայն. սուլիացիները բոպէ մը չվհատեցան: Արեւմտացիներուն համբերութիւնը սխալ հասնելը շատերը կը ձգէին կը փախչէին, և մանաւանդ հիւանդութիւնն ալ մեծ ջարդ ընելով բերդերն ու բանակատեղիները կը կաղմալուծուէին: Արկիրն այդ մասը անբաւական էր այդքան զօրք ապրեցնելու, իսկ հեռուէն շատ քիչ պաշար կուգար, ան ալ ուշ ուշ: Պաշարւողները աւելի ահաւոր դրութեան մէջ էին. ահաւելի սով կը տիրէր անոնց մէջ: Վիշերային արշաւումները ապարդիւն կը մնային, զի երկիրը աւերակ եղած էր. սուլիացիները իրենց Ֆիլիքբական ուժը պահպանելու համար բաւականին կերակուր չունէին. հէնց այդ միջոցին Ալի խաղաղութիւնն առաջարկեց սուլիացիներուն, որով իրենց մէջ ամեն բան իր նախկին վիճակին պիտի վերածուէր, եթէ լեռնականները այլևս իր հողին վրայ աւարառութիւն չ'ընէին և իբր երաշխաւորութիւն քսան պատանդ տային իրեն:

Յավէլաս զոհելով իր անձնական ռիզիկոսները տագնապակից հայրենիքի ազատութեան սիրուն, նախընտրեց կռիւր յարմարագոյն ժամանակի ձգել և յանձն առաւ

բանակցիլ: Աեւր բերանը հովին բացած՝ յուսահատութեան մէջ էր. պէտք էր վերջապէս զի մը բռնել. սուլի զօրագլուխները որոշեցին յանձնել քսանչորս պատանդները: Ալի պատանդները առնելուն պէս ալ բանակցութեան խօսք անգամ չ'ըրաւ և տասերկու կէտերու պահագունդերը կրկնապատկեց: Նենգամիտ ու գազան փաշան քսանչորս պատանդները Եանեսայի բանալ նետել տուաւ, խորհելով որ անոնց ծնողքները՝ իրենց զաւակները ազատելու համար, պիտի ստիպէին սուլիացիները իր պայմաններուն զիջանիլ: Ընդհակառակը սուլիացիները սաստիկ զայրացած այդ ստոր մատնութենէն, վճռեցին վռէժ լուծել և վեղիրին ուէ առաջարկին այլ ևս ականջ չկախել: Թշնամուն համբերութիւնը յոգնեցնելու և ցուցնելու համար թէ իրենք բնաւ վհատած չեն, քանի մը օր վրայէ վրայ պատերազմական երգերով և տօնի աղմուկներով լեռ ձոր թնդացուցին: Երբ բախտը բերէր, որ քանի մը թիւրք գերիներ ձեռք ձգէին, ծաղրի համար էն կոշտ փոխանակութիւնները կ'առաջարկէին, ինչպէս, աղայի մը զիմաց՝ էշ մը, զինւորի մը զիմաց՝ խոզ մը: Այդ բոպէին սուլի մէջ հերոսական համերաշխութիւն մը կար, որ դեռ երկար դերը պիտի հանէր փաշային բոլոր հաշիւներն ու յոյսերը:

1801 մայիս ամսուն էր. պաշարումը տարի մըն էր որ կը շարունակուէր: Յոյները հարիւրէ աւելի մարդու կորուստ ունեցած էին, սպանուած կամ գերի բռնուած, ինչ որ իրենց համար անդարմանելի էր: Ուտելիքնին հատնելու վրայ էր: Յավէլաս խորհեցաւ լեռնէն հեռացնելանօգուտ բերանները, հետևաբար վիրաւորները, անկարները, ծերերը, պառանները, որոնք պաշտպանութեան գործին չէին կարող օգուտ սալ խումք մը կաղմեցին ու անարտունջ օրցերեկով լեռնէն դուրս ելան քորժու գնալու համար: Թիւրքերը՝ թերևս յուզուած այդ ցաւագին թափօրի տեսքէն և վախնալով որ սու-



լիացիները կարող են յուսահատական արարքի մղել եթէ փորձեն սպանել այդ անմեղ պանդխտները, ազատ ձգեցին որ մեկնին: Այդ դժբախտները գացին Յոնիական կղզիները, ուր իրենց հայրենակիցներէն ամենասիրալիր ընդունելութիւն գտան:

Քանի մը օր վերջը սուլիացիները անօթի ծարաւ էին. վայրի խոտեր և ծառերու կեղւններ քիչ մը ալիւրի հետ խառնած կը խաշէին, կ'ուտէին: Այս ահաւելի անօթութիւնը բոպէ մը չլեւադրեց զերենք անձնատուր ըլլալինչ ալ ըլլար պէտք էր ուտելիք ձորել. իրենց աչքը դարձուցին դէպի Պարկա (Սուլիէն ութ մղոն հեռու), որուն բնակչութիւնը նմանապէս քրիստոնեայ և ազատ ինչպէս սուլիացիները և գանուելով Քօրֆուի տիրապետներու հովանաւորութեան տակ, կարող էին անոնց օգնել առանց միւսիլմաններու վրէժխնդրութենէն վախնալու: Մութ և անձրևոտ գիշեր մը չորս հարիւր մարդ և հարիւր վաթսուն կին Յավէլասը գլուխ ունենալով, Պարկա գացին ապրուստ գտնելու յոյսով: Յավէլաս վճուեր էր մեռնիլ քան ձեռնունայն ետ դառնալ: Բարեբախտաբար առանց արկածի և կասկածի անցան պաշարողներու գիծը: Երբ տեղ հասան, ոյժ, կարողութիւն չէր մնացած վրանին, այնպէս որ հագիւ կրնային ոտքի վրայ կենալ: Պարկայի յոյները սրտառուչ և գրկաբաց ընդունելութիւն ըրին իրենց տարաբախտ արենակիցներուն, որոնց պատմութիւնները լսելով՝ հիացումի և գթութեան արցունքներ կը թափէին: Սուլիացիները չորս օր ձրի կերան, խմեցին Պարկայի մէջ և նոր ուժ գակիցներու մաղթանքները հետեւին: Կիները խուճիկ մեջտեղէն կը քալէին, ամեն մէկը քառսուն քիլօ բեռ շարկած. հարիւրի չափ մարդ առջևէն կ'երթային՝ աւելի թեթեւ բեռներով, որպէսզի վտանգի պահուն կարող ըլլան կուրի: Հազար երկու հարիւր թիւք կիրճին

բերանը շարուած, կազմ պատրաստ կ'սպասէին պաշարակիր լեռնականներուն, բայց երբ տեսան սուլիացիներու խրոխտ և վճռական տրամագրութիւնը, տեղերնէն անգամ ժաժ չեկան և ձգեցին ազատ անցնին: Ճիշտ ժամանակին հասան, որովհետև լեռը մնացողները անօթի ծարաւ կաշոսկրնին մնացած, կասկապուտ մեռել դարձեր էին: Գործերնին շատ գեշ էր, եթէ թիւքերը այդ բացակայ բոպէէն օգտուելով յարձակում գործէին: Պարկայէն բերուած պաշարին շնորհիւ, նոր հոգի և ուժ առին անոնց երկաթէ մարմինները: Աէլիտը դեռ կըրնար գիմարել:

Ալի իմանալով որ Սուլին նոր պաշար մտեր է, սաստիկ կատղեցաւ, կոշտութիւն և հայհոյանք չմնաց որ չթափէր իր տեղակալներու գլխուն, ամբաստանելով զանոնք իբր անհոգ ու վատ: Չորս սպայ մեռցնել տուաւ և օգնական զօրքերուն ռոճիկներն ալ մերժեց վճարել: Այս խստութիւնները բուռն դժգոհութիւն պատճառեցին բանակին մէջ, մանաւանդ Շամուրիի և Մուսաբէի ալբանացիներուն մէջ, որոնք յարմար առթի մը կ'սպասէին Արանայի փաշայէն հեռանալու համար: Սուլիացիները իմանալով թշնամի բանակին մէջ անցած դարձածը, օգուտ քաղեցին՝ դժգոհներու հետ բանակցութեան մըտնելու համար: Մտածեցին, առաջին անգամը ըլլալով — ինչ որ վաղուց պէտք էին ըրած ըլլալ — զինակցութիւն մը կ'ընէր ալբանացիներու հետ: Քանի մը օրուայ մէջ Գելվէօնի, Փարամիթաի, Ալերամի և Քօնիսփօլիսի պէյերը և չորս փաշաները՝ քրիստոնեաներուն հետ յարձակողական և պաշտպանողական դաշնակցութիւն մը կ'ընէին: Ալբանացիները 20,000 դահեկան փուխ սուլիացիներուն, որ պաշար և ռազմավարք գնեն. պատանդներ ևս առին տուին, այնպէս որ իւրաքանչիւր փաշա վեց սուլիացի պատանդ ունէր: Պօլեմարքը (զօրագլուխ) աճապարեց վերսկսիլ թշնամութիւնները, աւելի ուժգ-

նութիւնով որպէսզի իր զինակիցներու եռանդը բորբոքէ: Ար մտածէր արագ և վճռական յաղթութիւն մը ձեռք բերելը, որովհետեւ եղած դաշնակցութեան շարունակութեան վրայ մեծ յոյս չունէր, քաջ գիտնալով իր պատերազմակիցներու աշխարհածանօթ փոփոխամտութիւնը:

Ալի, որ քանի մը օրէ ի վեր Խանեա դարձած էր, պաշարութի հրամանատարութիւնը իր որդուն Մուխտարին ձգելով թշնամութիւններու շտանալէն և իր բանակի երեք քառօրդին դասալէք ըլլալէն հասկցաւ որ իր դէմ ընդարձակ դաւադրութիւն մը կայ: Ատանգը մեծ էր: Իսկոյն իրեն զէնք ընտրեց խորամանկութիւնն ու խոհեմութիւնը: Փողով և էնդրիկներով մէկիկ մէկիկ խորտակեց այդ շղթային օղակները զոր նոյնիսկ մեծ կռիւով մը պիտի չյաջողէր: Փարամիթիա կանտօնին մէջ քաղաքացիական կռիւ արժարծեց՝ և բնակիչները իրենց հողէն վճնտեցին Իսլամ ֆրօնիօն, սուլիացիներու բարեկամը: Աւերջապէս 30,000 դահեկանով կաշառեց Գէլվինօ դղեկին կառավարիչը՝ որ վէզերին յանձնեց բերդին բանալիները ու իր քով ունեցած վեց սուլիացի պատանդները: Ալի փաշա կարողացաւ այսպէս խորամանկութիւնով իր շուրջը սպառնացող փոթորկի ամպերը փարատել: Յավելլաս՝ որ ըստէ մը տէր էր Իպիրոսի ճակատագրին, աւելլի քան երբէք կատարած էր թշնամուն զէմ: Փոխնիփոխ յաղթութիւններն ու դժբախտութիւնները բնաւ չյուսահատեցուցին սուլիացիները:

Գէլվինօսի վեց պատանդները Խանեա փոխադրուեցան, որոնցմէ չորսը իսկոյն կախուեցան: Ալի միւս երկուքը ողջ պահեց: Մէկը Յավելլասի եղբայրն էր, միւսը Գիմօս Գրակօսի զաւակը: Ալի փաշան գիտնալով որ սուլիացիներու ուժը այդ երկու պետերու անվեհեր եռանդին մէջ էր, կը մտածէր, որ անոնց սիրականներուն դժբախտ զրուութիւնը պիտի ստիպէր Ֆօթօսն ու Գրակօսը համաձայնութեան մը գալ՝ զանոնք ազատելու:

Համար: Ալին սխալ տրամաբանած էր: Երբ Խանեայի մէջ կատարուած գաղանթեան լուրը հասաւ Սուլի, Յավելլաս և Գրակօս գերագոյն որոշումը տուին և երգում ըրին, որ փաշային ուէ առաջարկութեան ալ կարևորութիւն պիտի չտան: Ֆօթօս հաւարեց ժողովուրդը և անոնց սա կարճ ճառը խօսեցաւ. «Մեր վեց պատանդները Գէլվինօի մէջ թշնամիին ձեռքը ինկած՝ Խանեա տարած, կախուած և գերեզմանէ զրկուած են: Անոնց վրէժը լուծելէ առաջ աղօթներ անոնց համար»: Այս խօսքերուն վրայ բոլոր ժողովուրդը զայրոյթի սարսուռով մը ծունկի եկած և քահանաները բաց օդի մէջ հայրենիքի մարտիրոսներուն համար մեռելոցի պաշտօնը կատարեցին: Այս վեհ և մահաշուք արարողութիւնը աւարտելէ ետքը, սուլիացիները վրէժ կ'ըսէին, վրէժ կը գոռային:

III

Ժամանակէ մը ի վեր խորհրդաւոր մարդ մը՝ որուն ոչ ծագումը, ոչ ալ բուն անունը յայտնի էր, երևան եկաւ Սէլէիտի մէջ. Սամուէլ վարդապետն էր ան: Անոր կրօնաւորի հագուստը Սէլէիտի դռները բանալ տուած էր իր առջև: Իր կրակոտ և տարօրինակօրէն պերճախօս ճառերով կռիւներու մէջ իր յանդուգն արիութիւնով առաքեալի ու մարգարէի քայլնթացքով իր անցեալը պահելու գաղտնապահութիւնով՝ գերիշխան ազգեցութիւն ունեցաւ Սուլիացիներուն վրայ: Ֆօթօս, որ միշտ վախ ունէր որ իր զինակիցներու արիասրտութիւնը և յարատեւութիւնը վհատութեան չփոխուի, այս նորեկ մարդուն մէջ կարծեց գտնել կուռի նոր զարկ և ազգային խանդավառութեան նոր ուժ տալու գործիքը. ուստի խնդրեց իր հայրենակիցներէն որ սիրով ընդունին եկուր վարդապետը՝ յայտարարելով միանգամայն որ Սամուէլ Աս-

տուճակ զըկուած մէկն էր իրեն յաջորդ ըլլալու համար: Այս լուսահրօն արեղայի ազդեցութեան և հրամանատարութեան տակ, որ ինքզինք կ'անուանէր Ա երջին դատաստանը, Երիքովի պարիսպները կ'ործանող փողը Սուլիի պատերազմը, շատ չբշած՝ նոր կերպարանք առաւ:

Ֆոթօս Յավէլաս իբր պարզ զինուոր կը մասնակցէր հրամանատարութեան. բոլոր հոգը ձգելով վարդապետին, ինք իր մօրեզին յանդգնութեան յագուրդ կուտար: Ֆոթօսի սուրը սուլիացիներու մէջ, միջին դարու Ռօլանի սուրին հռչակը ստացաւ: Գուսանները կ'երգէին զայն իրենց գեղօններու մէջ, իսկ քրիստոնեաները միմիայն անոր դաշուճով կ'երգուընային. «Եթէ սուս կ'ըսեմ, Ֆոթօսի սուրը գլուխս թուցնէ»: Աւրիշ երգ մը կ'ըսէ.

«Թո՛ղ դան սա պառաւ թիւրքերը և տեսնեն թէ ինչպէս կը կուռին սուլիացիները. թող դան և Ֆոթօսի սուրին չափը առնեն»:

Այլի փաշան ի զուր կը պուայ թիւրքերուն, որ չփախին. անոնք լալով կը պատասխանեն.

«Հոս ոչ Գէլվինօ է, ո՛չ Շօրմօլօ. դիժ ու աշխարհահռչակ Սուլին է ան. թիւրքերուն արիւնովը կարմիր Ֆոթօսի սուրն է ան, որ ամբողջ Ալբանիոյ սև շապիկ հագցուց և բոլոր մայրերը լացուց»:

Երբ 1803-ին ամառը Ալի փաշան վերադարձաւ Էտիրնէէն, ուր գացած էր Կէօրկիմ փաշան՝ տեղին կառավարիչը հնազանդեցնելու համար, տեսաւ որ Սուլին առաջ ինչ որ էր ան է: Հետը բերած այբանացիներուն շաբաթ մը դադար տալէ յետոյ՝ քաղեց Աէլէիտի վրայ և պաշարուժը սաստկացուց: Քլէֆթները երբ տեսան որ իրենց չորս կողմը ճակատագրական շրջանակը կը սեղմուի, տխուր նախազգացումներ ունեցան, մանաւանդ որ պաշարը նորէն սկսած էր քիչնայ: Նախորդ սովի յիշատակը հերիք էր գունամալ ընելու

էն խիզախները: Երանի կուտային անոնց, որոնք մեռած էին կուռի մէջ բայց նորէն թշնամու հետ պայմանաւորուելու խօսք անգամ չէին ընէր: Այդ միջոցին Ալի նոր բանակցութիւններ սկսաւ, այս անգամ Պօլսէն եկած հրամանի մը վրայ: Սուլթան Աէլիմ Գ. որ Եանեայի փաշային աճուն յաջողութենէն սկսած էր խրանիլ, Սուլիի հասարակապետութեան մէջ՝ Ալիի իշխանութեան օգտակար հակակշիռ մը կը տեսնէր: Չէր ցանկար, որ սուլիացիները այդքան անսահման փառասէր մարդու մը հարւածին տակ մեռնէին, ուստի իսկոյն հրամայեց Ալիին, որ խաղաղութեան ընդունելի պայմաններ զնէ անոնց: Ալի փաշա՝ խոհեմութիւն չհամարեց բացէիբաց սուլթանի հրամանները չկատարել, հետեւաբար մարդ զրկեց Սուլի՝ առաջարկելով կուռին վերջ տալ՝ եթէ լեռնականները համաձայնէին, 1⁰ Ֆոթօսը արսորել, 2⁰ Լեռան մէջ բերդ մը կառուցանել Բ. Գոսն պատգամաւորի մը և քառասուն այբանացիներու պահագունդի մը համար: Մէկ կողմէն Ալի կը մտածէր, որ սոյն պայմանները խելացի պիտի թուէին Սուլթանին, միւս կողմէն կ'սպասէր որ սուլիացիները մերժէին: Միտքը դրած էր նաև բանակցութիւնները երկան քշել տալ՝ իր դիւրագրդի հակառակորդներուն համբերութիւնը հասցնելու համար: Մաքիսավէլական մտածումով մը այնպիսի պատգամաւոր մը ընտրեց, որուն անունը փոքրիկ հանարակապետութեան մէջ դժգոհութիւն պիտի ձգէր. Խրիստօ Բօցարիսն էր ան, Խօրկիօս Բօցարիսի 1) տղան: Այս վերջինը

1) Զանի մը ամիս ետքը պատերազմը բռնկեցաւ: Երբ թնդանօթը կը գոռար Սուլիի կողմը, Բօցարիս սաստիկ յուզում մը զգաց. բայց այնքան ուժ չունեցաւ մոռնալ իրեն եղած թշնամանքը եւ տեցնել իր հպարտ անձնասիրութիւնը: Իողծի խայծը սուկալի կը տանջէր գինքը: Վերջապէս շիրմալով ոչ ներել իր հայրենիքին վերագրած սպիտակաթիւնը, ոչ ալ դիմանալ ինչ իր դէմ ուղղած մեղադրանքին, թոյն խմելով վերջ տուաւ իր կեանքին:

Լամպրոս Յավէլասի մահուան ժամանակ իր բոլոր գերդաստանով լեռնէն քաշուած էր, որովհետեւ կը ցանկար պոլէմարք ըլլալ և չէր ներեր իր հայրենակիցներուն, որոնք երիտասարդ Ֆոթօսը իրմէն նախապատիւ համարէին:

Աէզիրին խելքով կարգ մը սուլիացիներ համակրութիւնով պիտի ընդունէին երիտասարդ Բօցարիսը, որ ունէր փայլուն յատկութիւններ և մեղաւոր չէր իր հօր յանցանքին համար. իսկ ուրիշներ անյիշաչար մնալով՝ պիտի շներէին, ուրկէ ներքին անհամաձայնութիւններ ծագելով՝ Սուլի դաշնակցութիւնը, որուն ուժը հիմնուած էր կատարեալ միութեան վրայ, մեծապէս պիտի խախտէր: Փաշային միտքը և հաշիւը այս էր, ինչ որ սխալ ելաւ:

Սուլիի ծերակոյտն ու պետերը խմբուած էին խրիստոն ընդունելու համար: Խորին տխրութիւն մը կը տիրէր ժողովին մէջ: Այն չարագուշակ օրերէն մէկն էր, ուր էն մեծ սրտերը կը թուլահաւատին և ուր էն հաստատամիտ մարքերը կը մոլորին: Ամենէն կտրիճները ընդհանուր սրտաթափութեան ապաւորութեան տակ էին. թէև կը սրդողէին իրենց առաջարկուած անիրաւութեան դէմ, սակայն զուր կը ճգնէին վերակոչել երբեմնի իրենց արութեան գործերը և ուժկորովը: Կժնդակ երկիւղի ազդեցութեան տակ, Ֆոթօսի արքային հրամանը ելաւ հակառակ Վամուէլ վարդապետի խորհուրդներուն և նզովքին: Աւարդապետը՝ վայրապար ջանքերէ յետոյ որպէսզի դատաւորները իրենց որոշումը ետ առնեն, դուրս խոյացաւ ժողովի սրահէն, խաչելութիւնը և սուրը ձեռքը բռնած, ազդակելով «Հաւատարիմները ինձի հետեան. ես միշտ պիտի գոչեմ, խաչ, Յունաստան և Ազատութիւն»:

Ժողովի դեռ սկիզբէն Սուլիի ամբողջ ժողովուրդը դատաւորներու սրահին շուրջը խոնուած՝ անձկօրէն

կ'սպասէր ժողովի արդիւնքին: Երբ Վամուէլ պատերազմի ճիշդ արձակեց, խանդավառութեան փայլակ մը անցաւ զինուորներու հոգիէն, որոնք դեռ անվճատ մնացեր էին: Երբեք հարիւր հոգի նետուեցան անոր ետեւէն և գացին ամրանալ Քունդի ամրոցին մէջ, մինչև ցմահ դիմադրելու համար: Ֆոթօսի քոյրը՝ Քայրօ, արժանի դուստրը Մօշօ հերոսուհիին, շուտով եկաւ անոնց միացաւ: Յավէլաս, որ մինչև այն ատեն բացակայ էր, ժողովին կողմէ հրաւիրուեցաւ: Սուլիի հերոսը դեռ չգիտէր իր դէմ եղած վճիռը և ոչ որ կը համարձակէր յայտնել անոր դառն ճշմարտութիւնը: Անվէհեր և հաւատարիմ Կրակոսը՝ չուզելով իր բարեկամին արքայի դատակնիքին մասնակցիլ, Վամուէլի ետեւէն գացած էր: Յավէլաս լուռ և արտուճախուր՝ կ'ըսպասէր դատաւորներու սրահին մէջ, ուր ներկայ էր Բօցարիսը. ոչ որ քաջութիւն կ'զգար առաջ խօսք բանալ: Զօրագլուխներէն մէկը, վերջապէս ոտքի ելաւ և դողդոջ ձայնով մը դուժեց տխուր վճիռը: Յավէլաս ապշահար, մէկէնիմէկ պատասխան չկրցաւ տալ: Յետոյ ծածկելով իր սրտի սարսափելի ցաւիսկիծն ու խոշտանքը, արու քաղցրութիւնով մը ըսաւ. «Ար մեկնիմ քանի՛ քանի անգամ կ'սիրէր ու մահ հինաւերէ և հայրենիքի համար արիւնս թափելէ յետոյ, չեմ ուզեր այսօր իմ դիմադարձութիւնովս անոր փրկութիւնը վտանգել. բայց Աստուծո՛ւ սիրուն, երկիւղածութիւնով պահեցէք այն նուիրական աւանդը, զոր ձեզի կը յանձնեմ» — հայրենիքը և ազատութիւնը»: Այս ըսելով յանկարծ սրահը ձգեց, դուրս ելաւ ու տուն գնաց: Երբ ազգականներն ու բարեկամները հեծկլտալով անոր կը հետեւէին. իսկ ինքը, հանդարտ հանդարտ կը քալէր. երբեմն երբեմն կը կենար իր ընկերներուն յոյսի և սիրտանքի խօսք մը ուղղելու համար, առանց սակայն կարենալ զպելու իր առնական դէմքին վրայ սահող գաղտ արցունքը:

Տանը առջևը հասնելիս, Փօթօս հրամայական ժեստով մը իր հետինները դրան շեմին վրայ կեցուց, իսկ ինքը մինակ ներս մտաւ: Ամենքը կը մտածէին թէ երկիւղած ինքնամոհիւստով մը կ'ուզէր ազատօրէն վերջին մնաս բարովը ըսել հայրենի հին օճախին և վերջին անգամ մըն ալ աշօթել սուրբ պատկերներուն առջև, ուր իր հայրերը շատ դարերէ ի վեր ծնրադրեր էին: Յանկարծ խուլ աղմուկ մը լսուեցաւ. բոցի և ծուխի թանձր սիւն մը տանը երդիքը կը պատուէր: Այդ բուպէին Փօթօս դուրս ելաւ մահատագոյն դէմքով մը և զարհուրելի ձայնով աղաղակեց. «Պէտք չէ ըսուի, որ թիւրքերը ոտք կոխեցին Յավէլասներու տան մէջ»: Յետոյ մատով ցուցնելով Խօրթա գիւղը, որուն խրճիթ անակները, վերջալուսի ճառագայթներէն լուսաշող մարգրիտ ծաղիկներու պէս ճերմակ ճերմակ կը փայլէին դալարագեղ այլի մը գիրկը, յարեց. «Պէ՛ հոն կ'երթամ. պիտի հսկեմ ձեր վրայ և պիտի վերադառնամ այն օրը՝ երբ ինձի պէտք ունենար: Աստուած տայ, որ այդ օրը շուտով չգայ»: Փօթօս կըր տեսաւ, որ իր տունը բոցերու ճարակ եղաւ, արտորի ճամբան բռնեց, իրեն հեռեկեցան քսանհինգ բալիքարներ, որոնք չէին ուզեր դատուիլ անկէ և վճռած էին պաշտպանել զինքը ամեն վտանգի դէմ, որ կրնար պատահիլ անոր քլէֆթներու երկրէն դուրս:

IIII

Ալի փաշա Յավէլասի հեռանալը լսածին, հրաման տուաւ իր պատգամաւորին, որ բանակցութիւնները երկընցնէ. միևնոյն ժամանակ փափաք յայանեց տեսնել Սուլիի նախկին պօլեմարքը Խանեայի մէջ, որպէսզի, կ'ըսէր, բարեկամանար և վերջնականապէս իր երկրին գործերը կարգադրուին: Ալի կ'սպասէր, որ Յավէլաս իր

հայրենակիցներուն դէմ դառնացած և վրէժայի, խուտուճներով հրապուրուած, լեռնէն դուրս պիտի հանէր իր տոհմին բոլոր պատերազմիկները, և Սուլին զրկուելով իր արի պաշտպաններէն, դիւրութեամբ պիտի կրնար նուաճել: Փօթօս կը սուկար փաշային նենգամտութենէն, որուն փորձը պղտիկուց ճանչցած էր Խանեայի լճի զընդաններուն մէջ: Չարագուշակ մտածումներ կը տանջէին զինքը, երբ կ'երևակայէր այն տանջանքները, զոր Ալի վերապահած էր իրեն: Սակայն Շամուրի պէյերու և սուլիացիներու թախանձանքին չգիմանալով, որոնք կը յորդորէին զինքը երթալ խաղաղութիւնը հաստատուն հիմնուելու վրայ զնել, ահամայ և անոյս ճամբայ ելաւ, մոռնալով իր հայրենակիցներու սպերախտութիւնը, և աչքը առնելով գալիք ամեն վտանգ: Ալի երբ իմացաւ Յավէլասի գալը, զայն գիմաւորելու զրկեց եէնիչէրիններու խուճ մը և իր տան գլխաւոր սպաները: Եպիտոսի դրան առջև Սէլէիտի տարագիրը ընդունուեցաւ ամենամեծ պատիւներով: Թահիր-Աբբաս, վեզիրին առաջին նախարարը, իր տիրոջ կողմէն բարի գալուստ մաղթեց և անոր ընծայեց թանկագին մուշտակ մը, ոսկեհաւ լայնթև պատմուճան մը, ահանազարդ կոթով զոյգ մը ատրճանակ և արծաթ բանուած հրացան մը: Այս ընծաները և անսովոր շուքերը չէին կրնար շլացնել հերոսը, ոչ ալ անոր տխուր մտածումները փարատել:

Փօթօս վեզիրին պալատը առաջնորդուելով, ընդունուեցաւ Ալիի ներկայութեան, որ եղումեղը կարած իր թշնամին գրուելու համար կեղծանուշ լեզու մը սկսաւ բանեցնել: Յավէլաս անհամբերութեամբ մտիկ կ'ընէր այդ սուտուիւտա խօսքերը: Աերջապէս փաշան բացէիբաց առաջարկեց, որ Սուլին իրեն յանձնուի:

— Գու խնդիրքը թերևս կըրնայի կատարել, պատասխանեց Յավէլաս, եթէ հոս գալէս առաջ եղած ըլլար, երբ սուլիացիները վրաս վտտահութիւն ունէին:

չիմակ որ ձեր պալատի շեմէն ներս կոխած եմ, կը վախնամ որ զիս ալ երկրորդ Քօցարիսի տեղ առնեն և հաւատ չընծայեն խօսքերուս:

— Լաւ, ըսաւ վեղիրը, քեզի մտիկ չընողները ձգէ. Սուլիէն հանէ մենակ քու գերդաստանդ և քեզի հետեւիլ ուղղողները: Չեր ընտանիքներուն հաւեած տեղերնին պիտի տամ բնակութեան համար. դուք բոլորդ ալ ուղածնուդ պէս բոլոր Էպիրոսի մէջ ազատ էք: Այն ստեն, աւելցուց իր աչքերուն մէջ չարախայլ կեղծութիւնով մը. մնացածները պիտի նախանձին ձեր բախտին:

Փօթօս, փաշային բոլոր խօսքերուն բնաւ չէ չըսաւ և խոստացաւ, ինչ ալ ըլլայ իր առաքելութեան արդիւնքը, անպատճառ Էանեա վերադառնալ:

Սուլի հասածին, Յավէլաս հասկցուց իր հայրենակիցներուն երկրին սպառնացող վտանգը և Ալիի չարասիրտ դիաւաւորութիւնը, որ կ'ուզէր զիրենք ծուղակը ձգել: Լեռնականները, որ րոպէ մը թմրած էին ցնցուեցան, խոստովանեցան իրենց անիրաւութիւնը Փօթօսի դէմ, խոստացան կուրօրէն հնազանդիլ իրեն, վերաշինել իր տունը և աղաչեցին որ այլևս չհեռանայ իրենցմէ: Ամենքն ալ պատրաստականութիւն կը ցուցնէին կռուելու: Փօթօս տեսնելով որ իր հայրենակիցներու խելքը գլուխին եկաւ, րոպէ մը ցնցուեցաւ և շատ ցաւեցաւ որ Էանեա դառնալու երգումը տուած էր. ինչ օգուտ, խոստումը խոստում էր և իր որոշումը անդառնալի: Մտիկ ընելով իրեն եղած աղաչանք պաղատանքին, Յավէլաս մայրաքաղաքի ճամբան բռնեց, զիմագրաւելով Ալիի վռէժինգրութեանը և սրտի ու հոգիի մեծ ուժով մը համակերպելով իր ճակատագրին:

Հազիւ Էանեա հասած էր Փօթօս՝ միջնաբերդի ստորերկեայ մուտք զնդաններուն մէջ նետուեցաւ: Աւելի իր հայրենիքի քան իր անձին վրայ մտածելով, միջոց գրտաւ բանտի խորէն իր հայրենակիցներու հետ թղթակ-

ցելու, զորս կը խրախուսէր որ կռուին վերջ չըտան և իր մասին ոչ միայն հոգ չընեն, այլև իր ազատութիւնը ունէ դաշնակցութեան պատճառ չընեն: Միաժամանակ կը յանձնարարէր Վամուէլ վարդապետին, որ իր հոգուն համար պատարագ ընէ. այս անգամ մահը անխուսափելի կը կարծէր:

Վակայն Ալի փաշա պատերազմը դիմամբ կը ձգձգէր, որովհետև սուլթանի հրամանները բացէիբաց չկատարելու համար դեռ զօրաւոր չէր զգար ինքզինք: Այդ միջոցին Փրանսական Արաբ Նաւը՝ Պարկայի մէջ սուլթանիցներուն համար պատերազմի պաշար հանեց: Ամբողջ Սուլին նոր հոգի առաւ, բայց միանգամայն այդ նուէրը իր կորուստը պատճառեց: Ալի երբ իր ըրտեսներու միջոցով իմացաւ այդ դէպքը, ուղեց օգտուիլ, խկոյն սուրհանդակ ղրկեց Պոլիս և իմացուց Տիփանին, որ Փրանսացիները սուլթաններու կոչին վրայ Էպիրոս ցամաք ելած և անոնց ահապին ռազամթերք բերած էին և թէ Յունաստանին կոչ կ'ընէին ապստամբիլ. վերջապէս, կայսրութիւնը զարհուրելի և թերևս ճակատագրական դրոգում մը պիտի կրէր, եթէ շուտով առջևը չառնուէր: Ալի չմոռցաւ նաև իր ամբաստանութիւններուն և խորհուրդներուն կցել մեծ գումարներ՝ Տիփանին գլխաւոր անդամները կաշառելու համար: Բ. Գուռը, անընդունակ իրերուն շատ խորը քննելու, իսկոյն Ֆէրմանով մը վեղիրին լիազօրութիւն կուտայ սուլթանները բնաջինջ ընելու, որոնք անարժան էին կայսերական գթութեան: Ալի, այս բացարձակ հրամանին վրայ, ինքզինք ամեն բան ընելու. ազատ զգալով ալ մարդ չմնաց գլուխը ժողովեց և իր նոր բանակէն 10.000 հոգի անմիջապէս հեղեղել պէս խուժեցին դէպի զարհուրելի լեռան մուտքը: Սուլիի մէջ եռանդն ու ոգևորութիւնը իրենց գագաթնակէտին հասած էին՝ մանաւանդ երբ լսեցին որ փաշային շինել տուած Ղիլիս էն մեծ աշտա-

րակը փլեր էր: Սամուէլ չէր կրնար զսպել իր զինուոր-
ներուն յախուռն վառվառութիւնը, որոնք միմիայն յաղ-
թութիւններ կը տեսնէին: Այնքան հրաշքներ գործելէ
յետոյ՝ սուլիացիները հարիւրին հարիւր յաղթական
կ'երէին նորէն, եթէ մատնութիւնը չգար քանդել հե-
րոսութեան գործը:

Քուցօնիքա և Գուսիս, երկու պետերը որոնք ամենէն
աւելի նպաստած էին Ֆօթօսի աքսորման, չափազանց
գովիւմով ընդունեցին թշնամութիւններու վեր-
սկիւրը. ուստի որոշեցին շուտ փութացնել, որպէսզի ինք-
զինքնին և ինչքերնին կարենան փրկել: Առաջինը յան-
կարծ իրեն յանձնուած կիրճին պաշտպանութիւնը ձգեց
ու գնաց, երկրորդը այնքան վատ եղաւ, որ Աէլի փա-
շայի հետ խօսք մէկ ըրաւ և օգտուելով փոթորիկ գի-
շերէ մը, երկու հարիւր ալբանացի մտցուց իր տունը,
որ կը գտնուէր Սուլիի կեդրոնը: Առտուն կանուխ (25
սեպտ. 1803) Աէլի փաշա նայիս այդ գիւղին առջև
անկուեր է, ուր միայն 50 պատերազմիկ կային, որոնք
ստիպուեցան Քուզի գիւղը նահանջել: Այդ պահուն
թիւրքերը խուժեցին Սուլիի մէջ, իրենք ալ զարմացած
որ առաջին անգամը ըլլալով ոտք կը կոխէին այդ
ահագդեցիկ հողին վրայ, ուրախութենէն ու հպարտու-
թենէն արբշու, որպէս թէ իրենց այդ հեշտ յաղ-
թութիւնը զօր կուուի մը արգասիքը եղած ըլլար:

Այդ միջոցին Սամուէլ վարդապետը դրօշակը բար-
ձրացուց Քուզիի աշտարակին վրայ, որով լեռան բոլոր
բնակիչները կը հրաւիրէր իր շուրջը համախմբուիլ:
Իսկոյն Ավարիբօսի և Սամօնիվաի բնակիչները իրենց
գիւղերը պարպեցին, ուր ալ անկարելի էր մնալ: Քա-
ռասուն օր շարունակ թիւրքերը վայրապար ճիգեր թա-
փեցին Քեսֆան գրաւելու համար, զօր սուլիացիները
յուսահատութեան բոլոր ուժովնին կը պաշտպանէին:
Երբ տղամարդիկ յոգնասպառ քանի մը ժամ դադար

ուղէին առնել, կիները իսկոյն անոնց տեղը կ'անցնէին
և ամենայնպէս յարձակումներ կ'ընէին: Նոյնմբեր ամ-
սուն, մատնութիւնով ձեռք բերուած յաղթութենէն զատ,
թիւրքերը դեռ ոչ մէկ յաղթութիւն չէին շահած. սակայն
անողորմ սովը երթալով կը սաստկանար և կ'սպառնար:

Յալէլաս, բանտի տառապանքին մէջ, օրը օրին իր
հայրենակիցներու յաջողութեան ու ձախորդութեան
մասին լուրեր կ'առնէր: Սուլիի առուով Խանեայի փա-
շայի կեանքի էն մեծ ուրախութիւնը եղաւ. բայց վախ-
նալով որ այդ անսպասելի յաղթութիւնը, ինչպէս ան-
ցեալին մէջ, կարող էր պարտութեան փոխուիլ, Ֆօթօսը
բանտէն հանեց, խորհելով որ ժամանակը եկած էր այլ
ևս իր թանկագին պատանդէն օգտուելու համար:

Տեսնելով իր դոհին անձանաչ դիմագծերը, փոսացած
այտերը և ծայրայեղ թուլութիւնը, Ալի խորունկ գթա-
սրտութիւն կեղծեց և աչքերը երկինք վերցնելով գո-
չեց. — «Ա՛խ, Յալէլաս, եթէ դուն առջի օրէն ինձի
հաւատարմօրէն ծառայել ուղէիր, ես այդքան փող և
մարդ չէի վատներ Սուլին առնելու համար և դու ալ
այս տխուր օրին չէիր հասնիր:

— Սուլին առեր է, պատասխանեց Յալէլաս, սխալ
է, դու Սուլին չես կրնար ձեռք ձգել, խախուտ է քու
նուաճումդ: Երգար բարակ խորհեցայ և որոշեցի այ-
սօրուրնէ բոլորովն քեզի հաւատարիմ ըլլալ: Չգէ եր-
թամ լեռը, եթէ կ'ուզես անոր վերջնական տէրը դառ-
նալ: — Ինտոր հաւատամ քեզի. մէյ մը խաբեցիր զես
արդէն, ո՞վ կրնայ ըսել որ նորէն զես պիտի չխաբես:

— Որդիս քեզի գրաւական, պատասխանեց Ֆօթօս:

— Այդ հերիք չէ, ըսաւ վեզերը, բոլոր ընտանիքդ
կ'ուզեմ:

Յալէլաս հրաման ղրկեց, որ իր կիներ և զաւակները
Աէլի փաշային յանձնուին Խանեա զըկուելու համար.
Գիտէր որ անոնք այլևս կորսուած են, բայց կ'ուզէր դեռ

յետին ճիգ մըն ալ ընել իր երկիրը ազատելու համար. այդ սպարտական հոգիին մէջ ընտանիքը ոչինչ էր հայրենիքին քով: Երբ որ յետոյ մէկնեցաւ լեռը, խօսք տալով անկէ հանել երեք հարիւր մարդ, որոնք առանց վարանելու անոր պիտի հետեւէին: Հրամանագրով մը գնաց Աէլի փաշային մօտ, անոր հետ համաձայնելու և փախստականներուն ազատ անցքը ապահովելու համար: Քօթօս անհուն կսկիծ և զայրոյթ զգաց այն բուպէին, երբ հայրենի գիւղը մտնելու համար՝ պարտաւորուած զգաց վէղերին ստորագրութիւնը ցուցնել. հազիւ կրցաւ զսպել իր սրտմտութիւնը Աէլի փաշային առջև, որ լրբօրէն Սուլիի եկեղեցիին գաւիթը գորգը փռած՝ հոն շուքը կը քնէր ու կը ծխէր: Միակ մտիթարութիւն մը եթէ ունէր արիասիտ քլէֆթը, այն էր, որ Յավէլասներու տունը թիւրքերու շիուսէն սրբապղծուած չէր, զի արդէն ինքը վառած և մոխիր դարձուցած էր:

Յաջորդ օրը՝ Քօթօս Քեաֆա մտնելով՝ սիրտը կտոր կտոր եղաւ, իր երկրի գրեթէ յուսահատական տեսարանէն. իր ներկայութիւնը, որ հրաշքի պէս բան մըն էր, անսահման ցնծութիւն առաջ բերաւ լեռնականներուն մէջ: Աուլիացիները, աւելորդապաշտ՝ որքան կտրիճ, անոր ազատումին մէջ երկնային պաշտպանութիւնը կը տեսնէին և հակառակ սովի սև սպառնալիքին, ամբողջ լեռը տօնի երգերով թնդացուցին: Չուզելով Քուսդի Մամուէլին քով գնալ, թիւրքերուն կասկածը չհրաւիրելու համար, զօրագլուխները Քեաֆա ժողովելով՝ ըսաւ անոնց. «Ժամանակը սուղ է, ինձի մտիկ ըրէք, Ալի զիս ազատ ձգեց որ գամ ձեզ համոզեմ: Կ'ուզէ որ ես իմ ցեղիս մարդիկը և ուրիշներ հանեմ ասկէ՝ ինձմէ խօսք առաւ: Կ'իս և զաւակներս Եանեա՝ պատասխանատու են ինձ: Ինչիրը հիմակ ասոր վրայ չէ: Ժամանակ է որ բոլոր աւելորդ հաց ուտողները հեռացնենք. ես երեք հարիւր մարդու համար անցածութիւնը ունիմ, ուրեմն

այդքան կին, տղայ և ծեր շուտով ձամբայ հանենք: Ինձի ձգեցէք գանոնք տեղ հասցնելու հոգը, ուրկէ յետոյ կը վերադառնամ՝ ձեզի հետ կուսին միանալու: Շուտ ըրէք, որպէսզի Ալի խաբուած ըլլալը չլմացած՝ կարենանք փախչիլ»:

Յավէլասի առաջարկը միաձայն ընդունուեցաւ. հէնց նոյն իրիկունը Յավէլաս մեկնեցաւ Պարկա՝ պանդրխտւորները Քօթօս անցնելու գործը բանակցելու համար: Պարկացիները զիրենք երջանիկ կը համարէին նպատակելով դասի մը, որ իրենց ամբողջ Յունաստանի դատն էր միանգամայն: Քօթօս պատգամաւոր զրկուեցաւ տեղին կառավարչին հաւանութիւնը առնելու և պաշտպանութիւնը հայցելու համար: Պատգամաւորին դարձը ուշացաւ, իսկ Յավէլաս մտմտուքը առած էր, վախնալով որ իր երկար մնալը Պարկայի ազատ երկրին մէջ, թիւրքերուն կասկածը կ'ընար հրաւիրել՝ ուստի գնաց Մարկարիտի պատգամաւորին պատասխանին սպասելու: Հոն իմացաւ որ իր ծրագիրը երևան ելած է: Չվհատեցաւ և վճռեց հոգին ձամբան դնել ու խիզախել Աէլիի բարկութեան, որ երգում ըրած էր Յավէլասի գլուխը կտրելը: Կեկնեցաւ Աուլի, համարձակ ներկայացաւ փաշային և պնդեց, որ ինք երբէք դաւադրութիւն սարքելու գիտաւորութիւնը չէ ունեցած: Աէլի հաւատալ ձևացուց, վախնալով որ Աուլիացիները աւելի յուսահատական և զարհուրելի արարքի մը կը մղէ՝ մեղցնելով իրենց հին զօրագլուխը: Քօթօս, գիշերով գաղտուկ մը անցաւ Քեաֆա՝ ուր գործերը շատ անոյս դրութեան մէջ գտաւ: Եկէր Ալիի կամբին հլու գործիքը եղած էր: Քուցոնիքա, երկու հարիւր սուլիացի համոզած, տեղերնէն հանած և Զօլոնիս գաւառը տարած էր: Կէջը սրն է: քլէֆթները վհատ և յուսահատ՝ պայմանաւորած էին յաջորդ օրը Քեաֆան թիւրքերուն յանձնելը: Քօթօս սիրտը կտրած, գնաց ս. Աէկէրանդի ժամը քաշուեցաւ, ուր վեց

հարիւր անձնուէր և լեռան պէս կտրիճ սուլիացիներ, դեռ կը կռուէին, վճռած ըլլալով, մինչև իրենց արեան վերջին կաթիլը թափել հայրենի հողին վրայ, զոր ան- յոյս էին փրկելու:

Ալի փաշա ալ այս անգամ ապահով էր որ իր թըշ- նամիին հետ գլուխ կ'ելլէ. ուստի Կանեայէն վազեց եկաւ, Սուլիէն ու Քեաֆայէն անցնելով՝ քաղեց Քուն- ղիի վրայ, հազարաւոր բանակի մը գլուխն անցած: Այդ ապահով և աժան յաղթութեան փառքը կ'ուզէր ինք վայելել: Կրբ իմացաւ որ ֆոթօս ս. Աէնէրանդի մէջ կը գտնուէր, անէճք չմնաց որ շթափէր իր որդուն Աէլիի գլխուն՝ անոր անձարակութեանը համար: Յարձակումը 48 ժամ յետաձգեց, մեծ ուժեր հաւաքելու համար, այնքան Յավէլասի անուըր ահ ու սարսափ ազգած էր: 1803 դեկտ. 7-ին, ձեռքին տակ ունէր 10,000 մարդ:

Գիշերը՝ ֆոթօս, այդ անզուգական և կրակոտ գոր- ծիչը, չորս հարիւր փալիքարներով ու երկու հարիւր կիներով Քունդիէն դուրս ելաւ և ամրոցէն քիչ հեռու շուտ շուտ ցցապատնէշներ և պատնէշներ շինեց, որոնց ետև իր քաջարի խումբը սպասեց թշնամիին: Արևծա- գին՝ երբ դէրվիշները իրենց առաւօտեան աղօթքը վեր- ջացուցին, թիւրքերը գուռով գոչուով առաջ խաղացին: Իսլամ բանակը բնաւ ասանկ ոգևորութիւն չէր ցցուցած: Հրացաննին մէկդի նետելով՝ սուսերամերկ խոյացան թե- թեաշէն ամրութիւններուն վրայ՝ զոր կը յուսային միա- համուռ յարձակումով մը գրաւել: Տասը քայլ մնացեր էր, երբ սուլիացիները այնպիսի ահաւոր հրացանաձգութիւն մը սկսան, որ վէզերին զօրքերը ցնցուած՝ գլորվոր ետ ընկրկեցան: Երբ հրացանները շատ տաքցած էին, քէֆթ- ները քարերով փայտերով պաշտպանեցին ինքզինքնին: Սոյն եզական կռիւը, ուր 400 մարդ դէմ կը դնէին 10,000 մարդու, հինգ ժամ շարունակուեցաւ: Սուլիա- ցիները կոճղերու և ապառաժներու սարսափելի տարափի

մը տակ, սոսկալի ջարդ տուին թշնամի խաժամուժին, որմէ հարիւրներով կը գլորէին: Կն վերջը թիւրքերը վհատ և լեղապատառ՝ աղուաղցան դարձած քաշուեցան Քեաֆա, սուլիացի կիներէն ծաղը ու ծանակ եղած: Այս սոսկալի պարտութենէն յետոյ, Ալի շունչը Եանեա առաւ, կրած ամօթը և բարկութիւնը իր պալատին մէջ պար- տըկելու համար:

Հակառակ այդքան հրաշալի քաջագործութիւններուն, Սուլի գոյութիւն ունէր միայն Քունդիի պաշտպաններուն հերոսական յամառութիւնովը: Եօթը օր, Ս ա մ ու է լ որ սրտի կսկիծով կը տեսնէր իր առաքելութեան վախճանը, Յ ա վ է լ ա ս, որ գերեզման մը ունենալ կը տենչար՝ իր սիրած հողին վրայ, որուն ազատութեան համար այնքան փառաւոր բայց ապարդիւն կերպով իր կեանքը նուիրած էր. Ք ա յ դ օ, որ կանացի մարմնի մը մէջ բորբոլին առ- նական հոգի մը ունէր,—իրենց օրինակով իրենց զինակից ընկերներուն նուազ ուժերը վառ պահեցին: Ֆոթօս, որ յոգ- նութեան զգացումը մոռցեր էր, օր ու գիշեր արինահեղ յարձակումներ կ'ընէր, բայց սովը, այդ անողոր թշնամին, որ սկիզբէն յաւիտենական սպառնալիքի մը պէս կախուած էր սուլիացիներու գլխուն վրայ, Քունդիի ճակատագիրը ևս գուժած էր: Ջուրը անգամ կը պակսէր լեռնական- ներուն մէջ իրենց պապակը մարելու համար՝ տաժա- նացից ժայռերու բարձրէն Ախերոն գետին մէջ—ս. Աէնէրանդէն 800 ոտք խորը—մեծ չուանով սպունդ- ներ կը ձգէին՝ մէջը ծանր կապարներ դրած, որ գետին մէջ իջնէ ու ծծէ ջուրը: Այդպիսով ձեռք բերուած պուտ մը ջուրը կը քամէին երեսաներուն ու կիներուն շըր- թունքներուն վրայ: Սովի մահուան սպառնալիքին տակ ճարահատ՝ ինզրեցին Յավէլասէն, որ Աէլի փաշայէն պատուաւոր անձնատրութիւն խնդրէ: Արտաքին արագ և հզօր օգնութիւն մը դեռ կրնար փրկել Սուլին, բայց Յունաստանը իր ազատութեան համար դեռ միութիւնը

չէր սկսած: Ճար չկար, պէտք էր անձնատուր ըլլալ: Յավէլաս գրեց Վէլի փաշային, իր ղէնքերով և մարդերով լեռնէն դուրս ելլելու աղատութիւնը խնդրեց, ինչպէս նաև իր ընտանիքին արձակումը, որ գերի էր Նանեա:

Վէլի պաշարուողներուն յուսահատական կացութեանը տեղեակ չէր, որոնք մինչև վերջի բոպէն ծածուկ պահած էին: Ընդհակառակը, կը վախնար որ դեռ զիմադրութիւնը երկար կը տևէր և ինք ստիպուած կ'ըլլար վերահաս ձմրան խիստ եղանակին հոն մնալ: Ուստի փութաց հանդիսաւոր պայմանագրով մը (15 դեկտ. 1803) շնորհել սուլիացիներուն իրենց պատիւը, ինչքը, աղատութիւնը և հրամայեց երթալ ուր որ ուզեն, նոյն իսկ անոնց գրաստներ ալ տուաւ, բեռները կրելու համար: Իբր բարի միւսիլման երդում ըրաւ կայծակնահար ըլլալ և իր կիները երեք անգամ արձակելէ յետոյ՝ նորէն ամուսնանալ անոնց հետ, եթէ երբէք իր խօսքին դրժէր: Այս ահաւոր երդումներուն վրայ սուլիացիք հաւատացին անոր անկեղծութեան:

Քանի մը ժամ ետքը, սուլիացիները յաղթուած՝ ոչ թիւրքերէն, այլ սովէն ու մատնութենէն, կամաց կամաց իրենց սիրական լեռներու կողերէն վար կ'իջնէին: Առջևէն կը քայլէին քահանաները՝ իրենց հետ տանելով ս. Վէնէրանդի խաչը և սրբազան անօթները: Տրտում տխուր էին ամենքն ալ՝ մերթընդմերթ բուռն հեծկտուք մը կ'ընդհատէր տիրող ծանր թախծութիւնը, բոլոր արու դէմքերը արցունքով թրջուած էին և սրտատա հոգիները վշտադէմ: Չմրան առաջին ձիւները արդէն պատանքի մը պէս սկսած էին ձերմկցնել ամենաբարձր սարերը: Վեռան ստորտը երբ հասան, սուլիացիները անգամ մըն ալ ետև դարձան դէպի Քունդի և անխօս ժեստով մը իրարու ցցուցին զանի՝ սպագային նոյնտեղը ժամազիր ըլլալու խոստումով: Յետոյ բաժնուելով, ամենքն ալ զանազան կողմեր ցրուեցան: Մեծ մասը Յա-

վէլասի հետ դէպի Պարկա ուղևորուեցան, ուրիշներ ճումբերկա լեռը գիմեցին, անկէ Թեսալիա անցնելու և Քալէփուլթո պատերազմասէր արմատաօլի հրոստիւրմբին միանալու համար:

Մինակ Մամուէլ վարդապետը և հինգ սուլիացիներ մերժեցին անձնատուր ըլլալ: Քունդիի բերդին մուտքը յարձակողներու խուժանին դէմ ճակատ ճակատի պաշտպանելէ յետոյ, Մամուէլ վառօղի ամբարանոցը կրակ տուաւ և իր ընկերներու հետ օդը ելաւ, այսպէս վերջին սխրագործութիւնով մը ողբերգօրէն պսակեց շահատակութիւններու շարք մը, որոնք կը յիշեցնեն Յունաստանի զիւցաղնական ժամանակները: Թողովողական երգ մը սրտաշարժ միամտութիւնով մը կը պատմէ այս փառապանծ անձնազոհութիւնը.

« Թուշուն մը թուաւ Սուլիէն, աչքերը արցունքէն մըթնած ու թևերը սև էին: Պարկացիները անոր հարցուցին. — Թուշնիկ, ուրի՞կ կուգաս և ո՞ր կ'երթաս:

« — Սուլիէն կուգամ Փրէնկներու երկիրը կ'երթամ:

« — Մեզի խեր խապրիկ տուր, թուշնիկ.

« — Ահ լուրեր: Սուլին աւին. վարդապետը երեցին: »

Հազիւ այդ պայթումին վրայ, Վէլի փաշան ապահով՝ որ այլևս լեռան տէրն էր, հինգ հազար ալբանացի Պարկայի ձամբուն վրայ քրիստոնեաներուն ետևէն ինկան, զի Վէլի հօրմէն լուր առած էր, որ Գոթօսը ողջ կամ մեռ Եանեսա զրկէ: Բարեբախտաբար, սուլիացիները շուտ տեղ հասեր էին, անոնցմէ քանի մը հոգի միայն, որոնց մէջ Գէմօս Գրահօս և Յավէլասը, դեռ թիւրք հողի վրայ էին, սահմանագլխէն քանի մը քայլ հեռու: Վէլի փաշայի ալբանացիները հասան ետևնուն և քսան ձիաւոր սանձարձակօրէն խուժեցին անոնց վրայ. սուլիացիները ետ դարձան ու կրակ բրին: Գոթօս խորհելով որ այլևս ողջ չի մնար, սուրը քաշեց ու նետուեցաւ ալ-

բանացիներուն մէջ: Դրակօս վազեց ետեւէն; իր մարմնով պատսպարեց իր բարեկամին մարմինը և յաջողեցաւ . քիչ քիչ մտնել Պարկայի հողին վրայ, ուր թիւրքերը այլևս չհամարձակեցան ոտք կոխել:

Այի, մոլեգնած իր թանկագին որսը ձեռքէ փախցընելուն, իր կատաղութիւնը թափեց այն սուլիացիներուն վրայ, որոնք հաւատալով անոր խօսքին, Էպիրոսի զանազան կողմերը ցրուած հաստատուած էին: Ալբանացիները բոլորը ջարդեցին: Այդ նամերդ սրածուծներէն հազուէ 200 հոգի ազատուելով, Փօթօսի հետ Քօրֆու գացին: Կուսները անոնց մշակութեան հող տուին, բայց այս մարդիկը չկրցին սովորել հանդարտ և կանոնաւոր կեանքի: Շատ չանցած՝ յունական ապստամբութեան մէջ որոնեցին իրենց լափող գործունէութեան սնունդը: Յավէլաս ուսական ծառայութեան մէջ մտաւ և քանի մը տարի ետքը վերագարձաւ Քօրֆու, ուր իր վերջին շունչը աւանդեց, նորէն իր հայրենիքը դառնալու և հոն պատերազմը վերստին բռնկցնելու առիթին իղուր սպասելէն յետոյ:

Յավէլաս յաւէտ հռչակաւոր կը մնայ իր երկրի տարեգրութիւններուն մէջ: Իր անդուգական քաջութիւնը, հոգիի մեծութիւնը, իր չարաբաստիկ ողբերգական կեանքը, զինքը ժողովրդական պարերգերու էն սրտագրաւ և կորովատիպ դէմքը ըրին:

Փօթօսի արծարծած հուժկու հայրենասիրութիւնը, կը կարծուէր որ Սուլիի դժբախտ ճակատագրին հետ մտրեցաւ: Անդհակառակը, լեռան աղնիւ օրինակը չկորսուեցաւ: Յունաստանը հասկցաւ իր բարբարոս հարըստահարիչներուն իրական տկարութիւնը Սուլիի հերոսական կռուին մէջ՝ ուր երեք տարի շարունակ 1800 հոգի անվնասերէն դէմ դրին կայսրութեան էն հզօր փաշային աշխարհք մը բանակին: Այդ օրէն Յունաստանը խուլ կերպով սկսաւ թօթափել իր շղթա-

ները: Ապստամբութիւնը սարերէն գաշտերն ու քաղաքները իջաւ, որ շուտով պիտի պայթէր մարդու մը ազդեցութեան տակ, որ Յավէլասի չափ մեծ իր քաջութիւնով սակայն Սուլիի պօլէմարքին վրայ աւելի փորձառու ըլլալու առաւելութիւնը ունէր և որ կրցաւ փրկարար դասեր քաղել Աէլէիտի անբախտութիւններէն:

Սուլիի դիւցազնական կռիւը սրտոտ ու խրախուսիչ արշալոյսն էր Յունաստանի ապստամբութեան և ազատութեան, մինչև որ եկաւ Բօցարիս որ լեռան կռիւը, ազգային պատերազմի կերպարանափոխեց:

PUBLICATIONS
DE
l'Union des Etudiants Arméniens de l'Europe.

En français :

- 1) Ed. BERNSTEIN. **Les souffrances du Peuple arménien et le devoir de l'Europe** . Fr. 0.40
- 2) Alb. VANDAL. **Les Arméniens et la Réforme de la Turquie** . » 0.20
- 3) FRANCIS DE PRESSENSÉ. **L'Arménie et la Macédoine** . » 0.40
- 4) Georges BRANDÈS. **L'Arménie et l'Europe** » 0.40

En allemand :

- 5) Ed. BERNSTEIN. **Die Leiden des armenischen Volkes und die Pflichten Europas** . » 0.50
- 6) D'ESTOURNELLE DE CONSTANT ; DENYS COCHIN ; FRANCIS DE PRESSENSÉ ; JEAN JAURÈS ; PAUL LEROLLE ; ANATOLE LEROY-BEAULIEU : **Für Armenien und Macedonien.** » 0.60
- 7) Geogr BRANDÈS. — **Armenien und Europa** . » 0.40
- 8) ILSE FRAPAN. **Die armenische Frage.** » 0.40

En arménien :

(Voir la liste ci-contre).

Հայաստանի Ազգային գրադարան



NL0422745

17753

ԱԶԱՑ-ԳՐԱԴԱՐԱՆ

Խմբագրութեամբ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ ԼԻԱԶՈՐ ԿՕՄԻՏԵԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

գինը, սանտ

1) ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ	20
2) ԱՊՍՏԱՄԲ ՍՍՍՈՒՆԸ	20
3) ՀԱՅՐԵՆԱՍԷՐԻ ՏԱՂԵՐԸ	20
4) ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻՆ	20
5) ՀԵՐՈՍԸ	20
6) ԼԵՌԱՆ ՌԱԶՄԻԿԸ	20
7) ՄԱՐԿ ԲՅՅՈՐԻՍ	20

(Պատրաստուած են այլ գրքեր)

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԻՉԸ, հայաստան, (չուտով կը վաճառանան ի) :

ՕՏԵՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

(Տես նախորդ էրէոր)

— 6 —

Adresse : Union des Etudiants Arméniens de l'Europe,
rue de l'Ecole-de-Chimie, 2, Genève (Suisse)